10.56653/18290361-2025.15-77

Արտակ Ասատրյան
*Հայաստանի պատմության թանգարան*
sardarapatasatryan@gmail.com

# ԷՋԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ*

**Հիմնաբառեր.** Հայաստանի պատմության թանգարան, արխիվ, ազգագրություն, գիտարշավներ, հավաքածուներ, ցուցադրություն, գիտահետազոտական աշխատանք

## Ներածություն

Սույն աշխատանքը, որի գաղափարը ծնվեց Հայաստանի պատմության թանգարանի 105 ամյակի համատեքստում, նպատակ ունի ներկայացնել Հայաստանի պատմության թանգարանի Ազգագրության բաժնի, մասամբ նաև այն աշխատակիցների գործունեությունը, ովքեր տարբեր տարիներին առանցքային դերակատարություն են ունեցել բաժնի կազմավորման, կազմակերպման և արդյունավետ գործունեության ընթացքում: Ասվածը հատկապես ցայտուն է դրսևորվում թանգարանի արխիվային (տարեկան և բաժնի հաշվետվություններ, աշխատանքային պլաններ, նիստերի արձանագրություններ) նյութերի ուսումնասիրության ընթացքում, որից երևում է, թե որքան համակողմանի են կազմակերպված բաժնի ընթացիկ աշխատանքները և որքան հստակ են նշված առաջնահերթությունները: Հատկանշական է, որ մասնավորապես այն տարիներին, երբ բաժինը ղեկավարել են Ս. Լիսիցյանը և Վ. Բդոյանը, Վ. Աբրահամյանը, Ն. Ավագյանը, բաժնի գործունեության հիմնական շեշտադրումներից էր ազգագրական գիտարշավների կազմակերպումը Հայաստանի տարբեր շրջաններ ու հարակից երկրներ և պատմա-ազգագրական նյութի համակարգված հավաքումն ու դրա շնորհիվ հնարավորինս լիակատար ազգագրական հավաքածուների ձևավորումը:

Փաստորեն Հայաստանի պատմության թանգարանի Ազգագրության բաժնի տարբեր տարիների գործունեության վերաբերյալ հաշվետվությունները, նիստերի արձանագրությունները որոշակիորեն դաշտային-ազգագրական նյութ են հանդիսանում, երբեմն նաև՝ ցուցադրությունների կազմակերպման ու գիտահետազոտական աշխատանքի մեթոդական ուղեցույց, և ինչ-որ առումով ունեն սկզբնաղբյուրի արժեք, ուստի և այս աշխատանքում վերոնշյալն առավել պատկերավոր ներկայացնելու նպատակով անդրադառնանք ՀՊԹ ազգագրության բաժնի պատմությանը թեմատիկ-ժամանակագրական կարգով:

* Ստացվել է 06.05.2025 թ., ուղարկվել է գրախոսության՝ 12.05.2025 թ., ընդունվել է տպագրության՝ 13.08.2025 թ.:

Ինչպես թանգարանի հիմնադրման, այնպես էլ ազգագրության բաժնի ձևավորման ու կազմավորման պատմությունն անխզելիորեն կապված է հայ ազգագրության և բանահյուսության մեծ երախտավոր Երվանդ Լալայանի անվան հետ, ուստի նախ և առաջ համառոտ անդրադառնանք մեծ գիտնականի գործունեության այն հատվածին, որն ավելի շատ վերաբերում է թանգարանային գործին[1]:

## Երվանդ Լալայանի թանգարանաստեղծ գործունեությունը

1907 թ. մարտի 30-ին հրավիրված Հայոց ազգագրական ընկերության ժողովը որոշում ընդունեց նախապատրաստական աշխատանքներ տանել թանգարան ստեղծելու համար, և այդ կապակցությամբ անհրաժեշտ համարվեց հրատարակել նյութեր հավաքելու ծրագիր, պատրաստել մատյաններ նյութերը գրանցելու համար, ստեղծել պահեստ Թիֆլիսում և այլն: Շուտով ծրագիրը տպագրվում է Ազգագրական հանդեսի 16-րդ համարում, այնուհետև՝ առանձին գրքույկով (Մելիք-Փաշայան, Նազինյան 1983, 11):

Ե. Լալայանի եռանդուն ջանքերի շնորհիվ կազմակերպվում է թանգարան, ուր կարևոր տեղ են գրավում նրա հավաքած և պեղած նյութերը: Թանգարանը գնալով հարստանում է և այնքան մեծ ճանաչում ձեռք բերում, որ արդեն 1913 թ. ռուսական բանասերների և բժիշկների 13-րդ համագումարի աշխարհագրական ենթասեկցիայի բյուրոն դիմում է Հայոց ազգագրական ընկերությանը՝ խնդրելով համագումարի օրերը Թիֆլիսում ցուցադրություն կազմակերպել (Մելիք-Փաշայան, Նազինյան 1983, 12):

Մինչև Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ստեղծումը (1959 թ.), մասնավորապես 1920–1940-ական թթ. ազգագրական գործն ամբողջությամբ կենտրոնացվեց Երևանում ստեղծված Հայաստանի պատմության պետական թանգարանում: Խորհրդային կարգեր հաստատվելուց քիչ անց Հայաստանի լուսժողկոմատը կարևորեց կենտրոնական թանգարան հիմնելու հարցը: Այցելուների համար բացվել է 1921 թ. օգոստոսի 20-ին՝ Գեղարվեստական թանգարան անվանմամբ: Առաջին վարիչը Վ. Ախիկյանն էր, իսկ երկու ամիս անց՝ Մարտիրոս Սարյանը: Թանգարանի առաջին ցուցանմուշները Հայաստանի կառավարության գնած գեղարվեստական մի քանի տասնյակ կտավներն էին: Նույն թվականի

---

[1] Այստեղ Երվանդ Լալայանի գործունեությանն անդրադարձել ենք այնքանով, որքանով այն առնչվում է քննարկվող թեմային: Ե. Լալայանի կյանքի ու գործունեության մասին մանրամասն տես Կ. Մելիք-Փաշայան, Երվանդ Լալայան (Ծննդյան 100-ամյակի առթիվ), Պատմա-բանասիրական հանդես, 1964, № 3, էջ 29–42, Կ. Մելիք-Փաշայան, Ա. Նազինյան, Երվանդ Լալայանի կյանքն ու գիտական գործունեությունը, Երվանդ Լալայան, Երկեր, հատոր 1, Երևան 1983, էջ 7–32, Ս. Վարդանյան, Վարանդայի բանավոր մշակույթը Երվանդ Լալայանի և նրա թղթակից-բանահավաքների գրառումներում, Լրաբեր հասարակական գիտությունների, 2015, № 2, էջ 356–367, Ռ. Նահապետյան, Ե. Լալայանը հայ ազգագրության ուսումնասիրության պատմաազգագրական շրջանացման մեթոդի սկզբնավորող, Ակունք (գիտական հոդվածներ ժողովածու), 2018/1 (18), էջ 5–19, նույնի՝ Ազգաբանական ուսումնասիրություններ, գիրք 2, XVII դ. երկրորդ կես–1980-ական թթ, Երևան 2019, էջ 192–234, Հ. Հարությունյան, Երվանդ Լալայան (Ծննդյան 160-ամյակի առթիվ), Պատմա-բանասիրական հանդես, 2024, № 1, էջ 304–310 և այլն:

ձմռանը Ե. Լալայանը Թիֆլիսից Երևան տեղափոխեց Կովկասի Հայոց ազգագրական ընկերության՝ Ե. Լալայանի ջանքերով հիմնված թանգարանն ու մասնագիտական գրադարանը՝ 20 հազար գրքով (Նահապետյան 2017, 8)։

Լուսժողկոմատի հանձնարարությամբ Ե. Լալայանի անմիջական ղեկավարությամբ թանգարանում կազմակերպվեցին հնագիտական և ազգագրական բաժինները, և նա էլ դարձավ դրանց առաջին վարիչը։ 1922 թ. Մոսկվայից Երևան տեղափոխվեցին նաև Լազարյան ճեմարանի՝ պատերազմի տարիներին այնտեղ պահված թանգարանային արժեքները, այդ նույն թվականին Ե. Շահազիզի ջանքերով՝ Նոր Նախիջևանի հայկական համայնքի հնությունների թանգարանային հավաքածուները։ Այս ամենը, կենտրոնանալով Գեղարվեստի թանգարանում, փոխեց նրա բովանդակությունը, ուստի նույն թվականի վերջերին թանգարանը վերանվանվեց Պետական կենտրոնական թանգարան։ Թանգարանը այնուհետև հարստացավ այլ տեղերից ձեռք բերված մի շարք արժեքներով, այդ թվում նաև պատմագրական արխիվային նյութերով։ Կենտրոնական թանգարանում ձևավորվեցին հնագիտական, ազգագրական, գեղարվեստական և պատմագրական բաժինները՝ հանձնվելով ՀՍԽՀ լուսժողկոմատի իրավասությանը և ղեկավարվելով հատուկ խորհրդի կողմից։ 1922 թ. վերջերին Մ. Սարյանի զբաղվածության պատճառով Ե. Լալայանը ժամանակավորապես դարձավ թանգարանի տնօրենը։ Նա 1926 թ. այստեղ տեղափոխեց «Անվո Հնադարանի» բեկորները, որը Առաջին աշխարհամարտի ծանր օրերին մեծ դժվարությամբ հասցվել էր Սանահին։ 1929 թ. թանգարան տեղափոխվեց 19-րդ դ. վերջերին Մ. Խրիմյանի կազմած Էջմիածնի վանքի Ազգագրական թանգարանը։ Թանգարանի հավաքածուները (15289 առարկա) համալրվեցին Հայաստանի և Անդրկովկասի հայաբնակ շրջաններից գիտարշավների միջոցով պարբերաբար հավաքված իրերով և Երևանի զանազան գերատեսչությունների ունեցած նյութերով։ Հավաքված հնագիտական և ճարտարապետական նոր նյութերը հնարավորություն տվեցին ստեղծելու նաև ճարտարապետական բաժին (1930 թ.), որի առաջին վարիչը դարձավ Թ. Թորամանյանը։ Սրանով բոլորվեց Պետական կենտրոնական թանգարանի կազմակերպման առաջին շրջանը (Նահապետյան 2017, 8–9)։

1928 թ. (Ե. Լալայանից հետո) Հայաստանի պետական պատմական թանգարանի ազգագրության բաժնի վարիչ է նշանակվում **Ստեփան Լիսիցյանը**[2] (1865–1947), որտեղ աշխատում է մինչև իր կյանքի վերջը (1947 թ.)։ Հենց այդ շրջանին է վերաբերում նրա եռանդուն գործունեությունը (Երեմյան և ուրիշներ 1987, 17)։ Լավ գիտակցելով պահի կարևորությունը՝ Լիսիցյանն ազգագրական նյութի գրի առնելը համարում էր առաջնահերթ և անհետաձգելի խնդիր։ Նրա բացառիկ եռանդի ու խորը գիտելիքի շնորհիվ թանգարանի ազգագրության բաժինը կարճ ժամանակամիջոցում համալրվեց արժեքավոր հավաքածուներով, ինչպես նաև գիտական բարձր մակարդակով կազմված ու համակարգված գրացուցակներով (Երեմյան և ուրիշներ 1987, 45)։

---

[2] Ս. Լիսիցյանի կյանքն ու գիտական գործունեությունը մանրամասն տես Ս. Երեմյան, Դ. Վարդումյան, Լ. Վարդանյան, Նյութեր Հայկական ՍՍՀ գիտնականների կենսամատենագիտության, № 41, Ստեփան Դանիելի Լիսիցյան, Երևան 1987։

Թանգարանային ցուցանմուշներ հավաքելու և ազգագրական հավաքածուները համալրելու նպատակով Ս. Լիսիցյանը 1930-ական թթ. կազմակերպել է ազգագրական գիտարշավներ դեպի Խորհրդային Հայաստանի տարբեր շրջաններ, ինչպես նաև հարակից հանրապետությունների հայաբնակ վայրեր: Գիտնականը շատ էր կարևորում և առաջնահերթ ու անհետաձգելի խնդիր էր համարում արագ վերափոխումների պատճառով կորստյան մատնվող ավանդութային մշակույթի տարբեր երևույթներին վերաբերող ազգագրական նյութի գրառումը: Այդ նպատակով գիտարշավներին զուգընթաց նա տեղերում թղթակիցների լայն ցանց է ստեղծել (Նահապետյան 2019, 255–256):

Ս. Լիսիցյանի կազմակերպած գիտարշավների վերաբերյալ ընդհանրական պատկերացում կազմելու համար համառոտ անդրադառնանք դրանցից մի քանիսին:

**Թանգարանի հիմնադրումից հետո առաջին ազգագրական գիտական արշավախումբը կազմակերպվել է 1931 թվականին**, դեպի Զանգեզուր՝ Ս. Լիսիցյանի ղեկավարությամբ: Արշավախմբի կազմում էին ավագ գիտաշխատող Եվգենյա Գյուզալյանը և լուսանկարիչ Սուրեն Զոլյանը: Գիտարշավն իր աշխատանքների համար որպես կենտրոնական վայր ընտրեց Սիսավանը-Սիսիանը, որտեղից այցելեց Անգեղակոթ և Բռնակոթ, ապա անցավ Գորիս, այնտեղից Խնձորեսկ, կրկին Գորիս և Քարահունջ ու Հալիձոր գյուղերով հասավ Տաթև, և Նախիջևանով վերադարձավ Երևան: Ազգագրական առարկաների հետ բոլոր պեղված վայրերում հավաքվում էին նաև հնագիտական առարկաներ (բրոնզե դարից մնացած զենքեր և զարդեր) (ՀՊԹ, արխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 416, 1)[3]:

Արշավախումբը ձեռք բերեց երկրագործական գործիքներ, անասնապահության (կաթնամշակության) որսորդության, մեղվաբուծության հետ կապված առարկաներ, աշխատանքային գործիքներ, ժողովրդական և եկեղեցական զգեստներ, հավատքի հետ կապված առարկաներ, զենքեր՝ թվով 123 առարկա (ՀՊԹ, արխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 416, 2):

**Երկրորդ արշավախումբը 1932 թվականին** կազմակերպվեց Մեղրու շրջանում, որի կազմում էին Ս. Լիսիցյանը, Ե. Գյուզալյանը, լուսանկարիչ Պ. Գրիգորյանը: Արշավախումբը սկսեց իր աշխատանքները Մեղրուց և ուղևորվելով դեպի հյուսիս՝ Տաշտունի (Դիրագլուի) լեռնանցքով տեղափոխվեց Կապան (ՀՊԹ, արխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 416, 2): Այս արշավախմբի միջոցով հավաքվել է 114 առարկա՝ զգեստ, զարդ, երկրագործական գործիքներ, հավատքի հետ կապված հմայական պահպանակներ, հաց թխելու պարագաներ, բնակարանի կահավորանք (ՀՊԹ, արխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 416, 2–3):

---

[3] Հայաստանի պատմության թանգարանի արխիվային գործերը դասակարգված ու վերնագրված են հետևյալ կերպ՝ օրինակ, «Հայաստանի պատմության թանգարան» ՊՈԱԿ, Արխիվ, ֆոնդ 1, ցուցակ 1, գործ 416: Տեքստն առավել դյուրընթեռնելի դարձնելու և անհարկի կրկնություններից խուսափելու համար դիմել ենք մասնակի կրճատումների, ինչպես օրինակ՝ ՀՊԹ արխիվ. ֆ. 1, ց. 1. գ. 416 և կոնկրետ էջը, որտեղից վերցված է նյութը կամ տեղեկությունը: Փաստաթղթերի ու արխիվային նյութերի ամբողջական անվանումները տես տեքստի վերջում՝ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ բաժնում:

Արշավախումբն իր աշխատանքները ծավալեց Մեղրի շրջկենտրոնում և հատկապես Կարճևան գյուղում: Ձեռք բերվեց 115 առարկա, որոնք հիմնականում աշխատանքային գործիքներ են շերամապահության վերաբերյալ, կաթնամշակության, տնային գործածական առարկաներ պղնձից, կավից, արծաթից, փայտից պատրաստված և երկաթագործական գործիքների տեսակներ (ՀՊԹ, արխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 416, 3):

1931թ. ապրիլին Ձանգեզուրի երկրաշարժի հետևանքների հաղթահարման տարում և ապա 1932թ. Ղափանի ու Մեղրու շրջաններից հայթայթված ազգագրական հավաքածուների հիման վրա թանգարանում հնարավոր է դառնում կազմակերպել ազգագրական ցուցադրություններ, որոնցից հատկապես հիշատակման արժանի է Ձանգեզուր-Մեղրի ցուցասրահը, որը գործեց մի քանի տարի (Նահապետյան 2019, 256):

**1934 թվականին Լոռու շրջանում** (Դսեղ, Լորուտ գյուղեր) ազգագրական գիտարշավի միջոցով (ղեկավար Ս. Լիսիցյան) ձեռք է բերվել 100 առարկա: Դրանք երկրագործական գործիքներ են, փոռցներ՝ մեզար, խսիր, խուրջին, աղաքսակ, կենցաղային առարկաներ փայտից, պղնձից (ՀՊԹ, արխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 416, 5):

**Հետագայում՝ 1935 թվականին, կազմակերպվել է ազգագրական գիտարշավ** դեպի Լոռի-Ղազախ (Շահալի, Օձուն, Կողբ) գյուղերը: Ձեռք է բերվում 136 առարկա՝ աշխատանքային գործիքներ, կնոջ և տղամարդու զգեստներ, զարդեր, տնային գործածության առարկաներ՝ փայտից, կավից, պղնձից, հաց թխելու պարագաներ, կարպետահյուս խուրջին, անկողնապարկ և այլն (ՀՊԹ, արխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 416, 5): Ազգագրական գիտարշավների ընթացքում Ս. Լիսիցյանը գրի է առել ոչ միայն վիթխարի ազգագրական նյութ, այլև թանգարանի համար հայթայթել է շուրջ 1000 ցուցանմուշ, որոնց մեջ շատ կարևոր տեղ են գրավում ոսկերչական, զինագործական, կավագործական իրերի ու գործիքների հազվագյուտ համալիրները: Դրանցում հատկապես կարևորվում էր կորստյան մատնվող Արևմտյան Հայաստանի որոշ լեռնային շրջաններին՝ Շատախին, Մոկսին, Սասունին վերաբերող արժեքավոր հավաքածուները (Նահապետյան 2019, 256):

Այդ տարիներին ՀՊԹ Ազգագրական[4] բաժինն ուներ մասնագիտացված կադրերի խիստ պակաս և կազմակերպչական առումով կայացման ընթացքում էր: Ս. Լիսիցյանը դիմում է Լենինգրադի պատմալեզվաբանական ինստիտուտի ղեկավարությանը և Մոսկվա՝ Լուսժողկոմի կադրերի բաժին՝ Եվգենյա Գյուզալյանին[5] Հայաստանի կուլտուր-պատմական թանգարան տեղափոխելու խնդրանքով: 1931թ. հուլիսից մինչև 1939 թվականը՝ իր ձերբակալումը Ե. Գյուզալյանն աշխատել է Հայաստանի պատմության թանգարանում՝ որպես ավագ գիտաշխատող: Գյուզալյանը վարել է բաժնի հաշվառման մատյանները, որոնցում նա գրանցել է

---

[4] Այս ժամանակաշրջանի փաստաթղթերում բաժինը երբեմն անվանված է «Ազգագրական», ուստի և որոշ դեպքերում թողել ենք այնպես, ինչպես կա:

[5] Ե. Գյուզալյանի կյանքի ու գործունեության մասին առավել մանրամասն տես Լ. Ավանեսյան, Եվգենյա Գյուզալյան. Ընդհատված կենսագրություն, Աշխատություններ Հայաստանի պատմության թանգարանի, № 1(11), Երևան 2023, էջ 260–261, Л. Варданян, Евгения Тиграновна Гюзаля: забытое имя в армянской этнографии, Репрессированные этнографы 2, Москва 2003, стр. 322–346:

3300 միավոր առարկա (կազմել է դրանց անձնագրերը)՝ գեղարվեստական նկար, լուսանկար (Ավանեսյան 2023, 260)։

Ս. Լիսիցյանի գլխավորությամբ կազմակերպված գիտական արշավներին Եվգենյա Գյուզալյանի մասնակցության մասին վկայում են մի շարք փաստաթղթեր՝ Գորիսի շրջգործկոմի նախագահ Ա. Հովհաննեսյանի 17.09.1931թ. գյուղխորհուրդներին ուղղված գրությունը, Սյունիքից՝ 250, Լոռուց՝ 267, Շահնազար գյուղից՝ 32, Ախալցխա-Ջավախքից՝ 250 տարբեր բնույթի առարկաների գրանցումները, դաշտային տետրերը (Ավանեսյան 2023, 260)։

Գիտարշավներից հավաքած ազգագրական նյութերի մշակումից և թանգարանային ընթացիկ աշխատանքներից բացի 1933–1934թթ., 1936թ. Ե. Գյուզալյանը և Ս. Լիսիցյանը միասին մշակում են ազգագրական թեմատիկ ցուցադրությունների պլանները։ Ընտանեկան կյանքի ու զբաղմունքների, ավանդական հագուստի, ժողովրդական արհեստների թեմատիկ բաժինները հանձնարարված էին Եվգենյա Գյուզալյանին։ Նրա մասնակցությամբ ցուցահանդեսներից լավագույնը 1939 թվականին «Սասնա ծռեր» էպոսի 1000-ամյակին նվիրված ցուցահանդեսն էր։ Կ. Ղաֆադարյանի գնահատմամբ՝ ժողովրդական հանդիսությունների ֆոնին այս ցուցահանդեսը մասշտաբային առումով առաջինն էր Հայաստանում (Ավանեսյան 2023, 261)։

Ցավոք՝ աշխատանքի բարձր գնահատականին անմիջապես հետևում է Եվգենյա Գյուզալյանի ձերբակալությունը։ Նրան ձերբակալել են 1939 թվականի սեպտեմբերի 15-ին Երևանում, քրոջ՝ Նազիկ Ղազարյանի տանը։ Մեղադրանքը՝ Կուսակցության և Կառավարության առանձին միջոցառումների դեմ ուղղված հակասովետական, թշնամական, հակահեղափոխական զրույցներն էին։ Հայկական ՍՍՀ գերագույն դատարանի քրեական գործերով Դատական կոլեգիայի 67 հոդվածի 1 մասով (հակասովետական պրոպագանդա) Եվգենյա Գյուզալյանին դատապարտել են տասը տարվա ազատազրկման և հինգ տարվա իրավազրկման։ 1941թ. աշնանը Կարագանդայի ճամբարում Ե. Գյուզալյանը ողբերգաբար կնքում է իր մահկանացուն (Ավանեսյան 2023, 261)։

**Հայաստանի պատմության թանգարանի Ազգագրության բաժնի վարիչի պաշտոնում Ստեփան Լիսիցյանին փոխարինել է Վարդ Բդոյանը (1910–1986):** Դեռևս 1944 թվականից նա աշխատել է թանգարանի ազգագրության բաժնում որպես գիտական աշխատակից, իսկ 1949–1959 թվականներին՝ որպես բաժնի վարիչ[6]։

Թանգարանում եղած 15 տարիների ընթացքում Վ. Բդոյանը մեծ աշխատանք է ծավալել թանգարանային արժեքների ձևավորման, հատկապես երկրագործական տեխնիկայի հավաքման, ցուցադրման, ինչպես նաև ֆոնդերի վերահաշվառման գործում։ Վ. Բդոյանը շարունակել է ազգագրական նյութերի հավաքման գործը և անձամբ զբաղվել Արարատյան հովտի, Վասպուրականի ու Սասունի երկրագործական գործիքների համալիրների վերականգնման հարցերով։ Ղեկավարել է

[6] Վ. Բդոյանի կյանքի ու գործունեության մասին մանրամասն տես Ռ. Նահապետյան, Հայ ազգագրության և բանագիտության մեծ երախտավորը (Վարդ Բդոյանի ծննդյան 100-ամյակի առթիվ), Էջմիածին 2010 Ժ, էջ 58–69, նույնի՝ Ազգաբանական ուսումնասիրություններ (18-րդ դ. երկրորդ կես–1980-ական թթ.), գիրք 2, Երևան 2019, էջ 336–359։

ազգագրական արշավախմբեր, ինչի շնորհիվ հարստացել են ոչ միայն Պատմության թանգարանի ազգագրական ֆոնդերը, գավառագիտական թանգարանների ազգագրական հավաքածուները (Նահապետյան 2010, 59)։

1950 թվականի հաշվետվությունից իմանում ենք, որ բաժնում աշխատում էին Վ. Բդոյանը (վարիչ, պ.գ.թ.), Է. Կարապետյանը (պ.գ.թ.), Ա. Ավդալը (բ.գ.թ.), կրտսեր գիտաշխատող Վ. Պետոյանը, կրտսեր գիտաշխատող Վ. Թեմուրճյանը և ասպիրանտ Դ. Վարդումյանը։

Վ. Բդոյանին հանձնարարված էր եղել Արտաշատի բնակարանների պատմությունը, Է. Կարապետյանը ստանձնել է ուսումնասիրելու Երևանի Կլարա Ցետկինի անվան առաջին ֆաբրիկայի բանվորների կենցաղն ու կուլտուրան, որպես Մոսկվայի Ազգագրության ինստիտուտի փորձի կիրառումը (ՀՊԹ արխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 435, 3), Ամինե Ավդալը 1950–1951 թթ. համար հանձն է առել գրել «Եզդիների պաշտամունքները և նրանց մնացուկների վերացման պրոցեսը սովետական պայմաններում» թեմայի վերաբերյալ. այս ուսումնասիրությունը քրդագիտության մեջ առաջին փորձն է, կրոնական սիստեմներն ամփոփ ներկայացնելու տեսակետից (ՀՊԹ արխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 435, 4–5)։

Վ. Պետոյանի[7] 1950 թվականի թեման էր «Նախկին սասունցի հայերի սովետական կենցաղը Թալինի և Աշտարակի շրջաններում»։ Այս աշխատության նպատակն էր ցույց տալ այն խոշոր շրջադարձները, որը կատարվել է սասունցիների շրջանում Սովետական Հայաստան ներգաղթելուց հետո (ՀՊԹ արխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 435, 5)։ 1965 թ. լույս է տեսնում «Սասունի ազգագրությունը» գիրքը, որն ընդգրկուն տեղեկություններ է հաղորդում Սասունի 10 գավառների և 539 գյուղերի (հայկական և քրդական) նյութական ու հոգևոր մշակույթի մասին (Պետոյան 2016, 15)։

Վ. Թեմուրճյանի թեման է «Գորգագործությունը Սովետական Հայաստանում»։ Հեղինակի նպատակն է եղել, հետադարձ հայացք ձգելով նախնական շրջանի վրա, ցույց տալ Հայաստանում գորգագործական արվեստի բարձր որակը և նրա իդեոլոգիական շրջադարձը (ՀՊԹ արխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 435, էջ 5)։

Դ. Վարդումյանի դիսերտացիոն թեման է «Լոռվա գյուղացիության տնտեսության և կենցաղի փոփոխությունները Սովետական Հայաստանում» (ՀՊԹ արխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 435, 6)։

Այստեղ ուշագրավ է մասնավորապես հետազոտությունների միտումը, որը ժամանակին բնորոշ լինելով հանդերձ, դինամիկ կերպով ցույց է տալիս այն փոփոխությունները, որը խորհրդային կարգերի հաստատումից հետո և դրա ընթացքում կրել է հայ ավանդական հասարակությունը։

Հաջորդ ուշագրավ տեղեկությունը գտնում ենք թանգարանի ազգագրության բաժնի 1953 թվականի հաշվետվության մեջ, որի մի հատվածն անհրաժեշտ ենք համարում մեջբերել ամբողջությամբ.

«Այս ամբողջ տարվա աշխատանքային հիմնական ուղղությունը կապված է եղել նոր ցուցադրության համար կազմվելիք էքսպոզիցիոն պլանների հետ։ Վե-

[7] Վարդան Պետոյանի կյանքի ու գործունեության մասին մանրամասն տես Վ. Պետոյան, Սասունի ազգագրությունը, Երևան 2014, էջ 3–10, նույնի՝ Սասուն, Երևան 2016, էջ 5–16։

բադաս մարմինների կողմից թանգարանը ԳԱ-ից անջատելու հետևանքով գիտական աշխատանքը մղված է եղել երկրորդական պլանի վրա: Մինչև 1953 թ. մարտի վերջը բաժինն ուներ յոթ աշխատակից՝ 4 գիտական աշխատող հայ ազգագրության և 1 գիտաշխատող քրդական ազգագրության գծով, մեկ ավագ լաբորանտ և մեկ ֆոնդերի պահեստապետ: Վերադաս մարմինների որոշմամբ ապրիլի սկզբներին երեք գիտաշխատող հայ ազգագրության և մեկ գիտաշխատող քրդական ազգագրության գծով տեղափոխվեցին ԳԱ Պատմության ինստիտուտ: Ապրիլից սկսած՝ թանգարանի ազգագրական բաժինն ունի մի գիտական աշխատող, որ միաժամանակ բաժնի վարիչն է, մի ավագ լաբորանտ և ֆոնդերի մի պահեստապետ» (ՀՊԹ արխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 443, 1):

Բաժնի գիտական աշխատողների մեծ մասի տեղափոխման, ինչպես նաև թանգարանը ԳԱ-ի ցանցից հանելու և կուլտուրայի մինիստրության ցանցը մտցնելու կապակցությամբ ազգագրական բաժնի տարեկան պլանների մեջ լուրջ փոփոխություններ մտան: Գիտական աշխատանքին հիմնականում փոխարինեցին գիտատեխնիկական բնույթի աշխատանքները (ՀՊԹ արխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 443, 1–2)»:

Սա ցույց է տալիս մի կողմից ժամանակի վերադաս մարմինների մոտեցումներն ու առաջնահերթությունները, մյուս կողմից՝ ևս մեկ անգամ արձանագրում այն փաստը, որ թանգարանի ազգագրական բաժնում գիտական աշխատանքը եղել է հստակ համակարգված, բարձր հիմքերի վրա, գիտական աշխատակիցները եղել են բարձր պրոֆեսիոնալներ:

1960 թվականից մինչև 1979 թվականը Հայաստանի պատմության թանգարանի ազգագրության բաժնի վարիչի պաշտոնը ստանձնում է Վալենտինա Աբրահամյանը (1908–1987): Մինչ այդ նա աշխատել է թանգարանի հնագիտության բաժնում, մասնակցել մի շարք հնագիտական պեղումների: Նրա օրոք ազգագրության բաժինը աշխատել է նույն ծավալով և ուղղություններով՝ շարունակելով մեծանուն նախորդների ազգանվեր գործը:

Վ. Աբրահամյանի ղեկավարությամբ ազգագրական գիտարշավներ են կազմակերպվել 1960 (ուղղությունները՝ Լոռի, Ալավերդու շրջան և Իջևանի շրջան, արշավախմբի անդամներ՝ Ն. Ավագյան, Ռ. Մելիքսեթյան), 1961 (Ախալցխայի և Մեղրիի շրջաններ, մասնակցությամբ՝ Ն. Ավագյանի), 1962 (Աշտարակի և Էջմիածնի շրջաններ, արշավախմբի անդամներ՝ կրտսեր գիտաշխատող Ն. Ավագյան և լաբորանտ Ա. Սամվելյան), 1963 (Թբիլիսի և Նոյեմբերյանի շրջան, մասնակցությամբ՝ կրտսեր գիտաշխատող Ն. Ավագյանի և լաբորանտ Ա. Սամվելյանի), 1964 (Աբխազիայի շրջանի հայկական գյուղեր և Թիֆլիս, մասնակցությամբ՝ Ա. Սամվելյանի), 1965 (Դոնի Ռոստովի հայաբնակ գյուղերում և Արմավիր քաղաքում, արշավախմբի անդամներ՝ գիտաշխատողներ Ա. Սամվելյան, Կ. Հովհաննիսյան), 1966 (Ստեփանակերտի և Մարտունու շրջանի Խնածախ, Բալուջա, Շուշիքենտ, Գիզի, Ճարտար, Կզկալա, ղարաղշլա, Աղդամ, Ասպարա գյուղեր, արշավախմբի անդամներ՝ կրտսեր գիտական աշխատակիցներ Ն. Ավագյան, Ա. Սամվելյան, Ի. Ավագյան), 1968 (Ախալքալաք, Ախալցխա, մասնակցությամբ՝ Ն. Ավագյանի), 1976 (Արթիկի ու Ախուրյանի շրջաններ, ինչպես նաև Աբխազական Ավտոնոմ ՍՍՀ, ղեկավարներ՝ Ն. Ավագյան և Ա. Պողոսյան) թվականներին ( ՀՊԹ, արխիվ, ֆ. 1, ց. 1,

գ. 416, 5; ֆ. 1, ց. 1, գ. 457, 1–4; ֆ. 1, ց. 1, գ. 463, 1–2; ֆ. 1, ց. 1, գ. 469, 1–2; ֆ. 1, ց. 1, գ. 473, 1–3; ֆ. 1, ց. 1, գ. 481, 1–2; ֆ. 1, ց. 2, գ. 129, 5; ֆ. 1, ց. 2, գ. 135, 9; ֆ. 1, ց. 2, գ. 142, 14–15; ֆ. 1, ց. 2, գ. 147, 5):

1968 թ. Ազգագրական բաժինը Հալեպից և Բեյրութից Ռոբերտ Ճեպեճյանի և Վ. Թութունջյանի միջոցով ստացել է ավելի քան 300 միավոր ազգագրական նմուշ, որոնցից հատկապես արժեքավոր են զեյթունցի կնոջ և տղամարդու տարազները, (ՀՊԹ, Արխիվ, ֆ. 1, ց. 2, գ. 142, էջ 15):

1969 թ. ընթացքում ազգագրական բաժնի ուշադրության կենտրոնում է եղել ֆոնդերի կարգավորումը և մշակման աշխատանքները: Կատարվել է 395 միավոր նոր ձեռք բերված ազգագրական իրերի ակտավորումը, նրանց համառոտ նկարագրությունը, ժամանակի որոշումը՝ ճշգրիտ տվյալներով մատյանում գրանցում անելու համար: Աշխատանքը կատարել է Վ. Աբրահամյանը (ՀՊԹ, Արխիվ, ֆ. 1, ց. 2, գ. 144, 25): Գիտաշխատող Ն. Ավագյանը ազգագրական բաժնի և կոլեկցիոն ու ձեռանկարի մատյաններում գրանցել է նոր ձեռք բերված 716 առարկա: Կրտսեր գիտաշխատող Ա. Սամվելյանը, լինելով հիմնականում համար 2 ազգագրական ֆոնդի ֆոնդապահ, կազմել է նոր ձեռք բերված նյութերի տեղագրական քարտերը և գրանցել ֆոնդի մատյանում: Սպասարկել է երկու կինոնկարահանումների, բացի այդ ֆոնդից օգտվել են հանրապետության գիտաշխատողները և միության տարբեր քաղաքներից եկած գիտնականները, որոնց տրամադրվել է ուսումնասիրելու 350 ազգագրական արժեք (ՀՊԹ, Արխիվ, ֆ. 1, ց. 2, գ. 144, 25):

1978 թվականին Հայաստանի պետական ազգագրության թանգարան հիմնադրելու առթիվ պատմության թանգարանի ազգագրության բաժնի աշխատակիցները մոբիլիզացվել էին՝ օգնության կարգով նյութեր հավաքելու նորաստեղծ թանգարանի համար: Ստեղծվեցին երկու թանգարանների գիտական աշխատակիցներից արշավախմբեր, որոնք եղան Երևան քաղաքի արվարձաններում և շրջակա գյուղերում, ինչպես նաև Ախալցխա և Ախալքալաք քաղաքներում և մի շարք գյուղերում (ՀՊԹ, Արխիվ, ֆ. 1, ց. 2, գ. 147, 8): Այս գիտարշավների շնորհիվ կարճ ժամանակամիջոցում Ազգագրության թանգարանի համար հավաքվեց 1215 ազգագրական բնույթի նյութ: Այդ իսկ պատճառով չիրականացվեցին պլանով նախատեսված գիտարշավները դեպի Հայկական ՍՍՀ Շամշադինի, Կրասնոսելսկի, Ամասիայի և Ղուկասյանի շրջանները (ՀՊԹ, Արխիվ, ֆ. 1, ց. 2, գ. 147, 9):

**Վ. Աբրահամյանին ՀՊԹ ազգագրության բաժնի վարիչի պաշտոնում հաջորդել է Ն. Ավագյանը (1922–2007):** 1948 թվականին ընդունվել է Հայաստանի պատմության թանգարան, սկզբում որպես բացատրող, հետագայում՝ ազգագրության բաժնի կրտսեր գիտաշխատող: **1979–1988 թթ. Ն. Ավագյանը եղել է ՀՊԹ Ազգագրության բաժնի վարիչը:** Նրա ղեկավարությամբ նույնպես շատ արդյունավետ էին ընթանում բաժնի աշխատանքները, այդ թվում՝ ազգագրական գիտարշավները՝ Ախալցխա (1960), Ալավերդու շրջան (1961), Նոյեմբերյանի Կողբ, Ղալաչա, Այրում գյուղեր (1961), Աշտարակի և Էջմիածնի շրջաններ (1964), Երևանի Շահումյանի շրջանում բնակվող սվեդահայերի մոտ (1965), Լենինական Ղարաբաղի Ստեփանակերտի, Մարտունու, Մարտակերտի, Հադրութի, Շուշիի շրջաններ (1966), Սևանի ավազանի Մարտունու, Վարդենիսի, Սևանի, Կամոյի շրջաններ (1969), Ախալքալաքի, Բոգդանովկայի, Ախալցխայի շրջաններ, Լենինական և

մոտակա գյուղեր (1970), Ապարանի և Արագածի շրջան (1971), Ստեփանավանի շրջան (1972), Էջմիածնի, Հոկտեմբերյանի, Արտաշատի և Լենինականի շրջաններ (1973), Թալինի շրջան (1976), Արթիկի և Ախուրյանի շրջաններ (1977), Ախալքալաքի, Բոգդանովկայի, Ախալցխայի շրջաններ (1978), Ղուկասյանի շրջան (1980), Էջմիածնի շրջան (1986) (Ավանեսյան 2022, 149–150):

Հանրապետական ու միջազգային գիտական նստաշրջաններում ներկայացրած շուրջ 40 զեկուցումներում Ն. Ավագյանը ներկայացրել է պատմական Հայաստանի տարբեր ազգագրական շրջանների (Բարձր Հայք, Սեբաստիա, Աղձնիք և Տուրուբերան, Վասպուրական, Նախիջևան, Սյունիք-Արցախ, Երևան և այլն) ավանդական հագուստի և կիրառական արվեստի ուսումնասիրմանը վերաբերող հիմնահարցերն ու հիմնախնդիրները (Ավանեսյան 2022, 150):

1974–1988 թվականներին Նազիկ Ավագյանը կազմել է Հայաստանի պատմության թանգարանի մշտական և ժամանակավոր բազմաթիվ ցուցահանդեսների Սպիտակի (1984), Հրազդանի (1984), Լենինականի պատմա-երկրագիտական թանգարանների (1985) էքսպոզիցիոն պլանները, Հայաստանի տարբեր մշակութային կենտրոններում շուրջ քսան շրջիկ ցուցահանդեսների էքսպոզիցիոն պլանները, Լենինգրադում, Կիևում կազմակերպված ցուցադրությունների էքսպոզիցիոն պլանները (Ավանեսյան 2022, 150):

1990-ական թվականներին նրա ջանքերով թանգարան մուտք գործեցին Երվանդ Լալայանի և Վարդ Բդոյանի անձնական արխիվները, որոնց գիտական մշակումն ու ցուցակագրումը կատարեց ինքը՝ Նազիկ Ավագյանը (Ավանեսյան 2022, 151):

1990-ականներին, չնայած երկրում տիրող ծանր հասարակական-տնտեսական պայմաններին, (ԽՍՀՄ փլուզում և դրանից բխող հետևանքներ) թանգարանը, ինչպես նաև ազգագրության բաժինը աշխատել են բավականին արդյունավետ: Առաջին կարևոր հանգամանքը, որը երևում է 90-ական թվականների արխիվային նյութերը նայելիս, այն է, որ բաժինն ունեցել է կայուն կազմ (վարիչ Ա. Սամվելյան, աշխատակիցներ Ի. Ավագյան, Ն. Ավագյան, Է. Ալոյան, Ս. Մելիքյան, Ա. Իսրայելյան, Լ. Ավանեսյան, Գ. Դավթյան, Է. Թովմասյան) և աշխատակիցներից յուրաքանչյուրը շարունակական կերպով զբաղվել է կոնկրետ թեմայով: Այս փուլից սկսած՝ ազգագրական հավաքածուները համալրվել են հիմնականում գնումների և նվիրատվությունների միջոցով: Բաժնի գործունեության առաջնահերթություններն են դառնում թանգարանի ազգագրական հավաքածուների ուսումնասիրությունը, գիտա-ֆոնդային աշխատանքը, թեմատիկ ցուցահանդեսների կազմակերպումը:

Թվարկենք դրանցից մի քանիսը:

**1990 թվականին բաժինը մասնակցել է Ջորավար Անդրանիկին նվիրված ցուցահանդեսին** (կազմակերպված նոր պատմության բաժնի կողմից): «Գորգարվեստը Հայաստանում» ցուցահանդեսը տարվել է Սիսիանի երկրագիտական թանգարան: Ֆոնդերում առանձնացվել է «Արցախի կիրառական արվեստը» ցուցահանդեսի նյութերը Սիսիանում ցուցադրվելու համար) (ՀՊԹ արխիվ, ֆ. 1, ց. 2, գ. 170, էջ 1):

**1996 թվականին բաժինը կազմակերպել է երկու ժամանակավոր ցուցահանդես.**

1. Հայաստանը գորգագործության հայրենիք. Վիշապագորգեր
2. Ե. Լալայանի հիմնադրած Ազգագրական հանդեսի 100 տարին (ՀՊԹ արխիվ, ֆ. 1, ց. 2, գ. 173, 1)։

Ցուցահանդեսների կազմակերպման առումով հատկապես արդյունավետ է եղել 1997 թվականը։ Կազմակերպվել և իրականացվել է յոթ ցուցահանդես, որոնցից հինգը՝ թանգարանում, երկուսը՝ թանգարանից դուրս, ընդ որում մեկը՝ արտերկրում (ՀՊԹ արխիվ, ֆ. 1, ց. 2, գ. 370, 1)։

«Թանգարանի նոր ձեռքբերումներ» ցուցահանդեսում ներկայացված էին նախորդ հինգ տարիների ձեռքբերումների ընտրանին։ Ցուցադրվեցին 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի հայ մշակույթի հովանավորներ և բարեգործներ Գ. Ադելխանովին, Մ. Արամյանցին, Ա. Մանթաշյանին վերաբերող նյութեր, Հայաստանի պատմա-ազգագրական շրջաններին վերաբերող կիրառական արվեստի առարկաներ, վավերագրական նյութեր, որոնց մեծ մասը թանգարանին արված նվիրատվություններ էին։ Ցուցահանդեսը գործել է ապրիլի 22-ից մինչև օգոստոսի 12-ը։ Ցուցադրվել է 174 բնօրինակ առարկա։ Ցուցահանդեսն իրականացվել է բոլոր բաժինների համագործակցությամբ (ՀՊԹ արխիվ, ֆ. 1, ց. 2, գ. 370, 1)։

Հայոց անկախ պետականության վերականգնման 79 և Խանասորի արշավանքների 100 ամյակներին էր նվիրված «Հայ ազգային ազատագրական շարժումները բնօրինակ լուսանկարներում» ցուցահանդեսը, որը բացվեց մայիսի 27-ին՝ Հայաստանի առաջին հանրապետության տոնի նախօրյակին (ՀՊԹ արխիվ, ֆ. 1, ց. 2, գ. 370, 1–2)։

«Սոնա Գարամանյանի (Ավստրալիա) ասեղնագործ ստեղծագործությունները» ցուցահանդեսը գործել է հունիսի 22-ից մինչև հոկտեմբերի 25-ը։ Ցուցահանդեսը Սոնա Գարամյանի 15 տարվա 138 ստեղծագործությունների ներկայացումն էր, որը որպես նվեր հանձնվեց թանգարանին։ Ասեղնագործությունների թեմատիկան հայկական ավանդական տարազն է, պատմական հուշարձանները, մանուկների աշխարհը, ալեգորիկ հորինվածքներ և այլն (ՀՊԹ արխիվ, ֆ. 1, ց. 2, գ. 370, 2)։

«Հայ առաքելական եկեղեցու գանձերը» ցուցահանդեսը նախապատրաստվեց և իրականացվեց քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակելու 1700-ամյակին նվիրված ծրագրերի շրջանակներում։ Ներկայացվեցին արվեստի եզակի հուշարձաններ, որոնք տասնամյակներ շարունակ փակված էին թանգարանի պահոցներում։ Ցուցահանդեսը բացվեց 1997 թվականի օգոստոսի 20-ին։ Բացման հանդիսությանը ներկա էին Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Ա-ն, հայ եկեղեցու հոգևոր հանձնաժողովի անդամներ, Հայաստան այցելած ուխտավորներ և բազմաթիվ հյուրեր։ Ցուցադրված էր պատարագի արարողությանը ծառայող 137 բարձրարվեստ ստեղծագործություն։ Ցուցահանդեսի հեղինակն Ազգագրության բաժնի վարիչ Ա. Սամվելյանն է, որի անմիջական պատասխանատվության ներքո իրականացվեցին անհրաժեշտ աշխատանքները (ՀՊԹ արխիվ, ֆ. 1, ց. 2, գ. 370, 2–3)։

1997 թվականին թանգարանի ֆոնդերը համալրվել են 1014 առարկայով, որից 486 առարկան՝ ազգագրական։ Բոլոր առարկաները ձեռք են բերվել նվիրատվությամբ։ Մասնավորապես՝ ազգագրական հավաքածուն համալրվել է Նոր-Ջու-

ղայի, Փերիայի, Արաբկիրի, Լոռու կենցաղին վերաբերող առարկաներով: Առանձնապես հիշատակելի են Ավո Հովհաննիսյանի նվիրատվությունները, ում ջանքերով ամբողջացվում է Իրանի և հատկապես Նոր Ջուղայի հայկական գաղթօջախի 19-րդ դարի վերջից մինչև 20-րդ դարի սկզբի ազգագրությունը ներկայացնող հավաքածուն (ՀՊԹ արխիվ, ֆ. 1, ց. 2, գ. 370, 5):

1998 թվականին թանգարանի ֆոնդը համալրվել է նվիրատվությունների, մասամբ նաև հավաքչական աշխատանքների միջոցով: Ազգագրական հավաքածուն հարստացել է ասեղնագործություններով, կենցաղային գործածության առարկաներով (ՀՊԹ արխիվ, ֆ. 1, ց. 2, գ. 370, 1):

2000-ականներին կարծես պահպանվեցին և շարունակվեցին 90-ականներին բաժնի գործունեության ընթացքում որդեգրած առաջնահերթություններն ու մոտեցումները: Բաժինը դարձյալ աչքի է ընկնում կայուն կազմով (վարիչ՝ Մ. Կիրակոսյան):

2000 թվականին ազգագրական ֆոնդերը համալրվել են 1292 առարկայով, որոնցից Նոր Ջուղայի կենցաղին և պատմությանը վերաբերող հավաքածուն՝ 1277 առարկա, նվիրաբերել է Ավո Հովհաննիսյանը: Հավաքածուն ամբողջացնում է գաղութի կյանքը՝ իր բազմաբովանդակ դրսևորումներով՝ 17-րդ դարից մինչև մեր օրերը (ՀՊԹ, արխիվ, ֆ. 1, ց. 2, գ. 371, 5–6): 2003 թվականին թանգարանի ազգագրական հավաքածուն համալրվել է 17–20-րդ դարերի կենցաղին վերաբերող կիրառական արվեստի 151 նմուշով, որոնցից հիշատակելի են Նոր Ջուղայի կենցաղին վերաբերող նյութերը (նվիրատու՝ Ավո Հովհաննիսյան) և տարբեր տարածաշրջաններին վերաբերող գորգարվեստի նմուշները (ՀՊԹ, արխիվ, ֆ. 1, ց. 2, գ. 372, էջ 3):

2006 թվականին «Հայկական տարազը 18–19-րդ դդ.» թեմատիկ ցուցադրությունում համապարփակ կերպով ներկայացվել են Հայաստանի գրեթե բոլոր պատմա-ազգագրական շրջանների կանացի տարազի գրեթե ամբողջական համալիրներ, տարազամասեր, ոսկերչության ու ասեղնագործության մեծարժեք նմուշներ (ՀՊԹ, արխիվ, ֆ. 1, ց. 2, գ. 456, 1):

2013 թվականին «Հայկական հանգույց. Գորգավեստի ավանդույթները» միջազգային գիտաժողովի շրջանակներում նոյեմբերի 20-ին բացվել է «Հայկական կարպետ» ցուցահանդեսը, որտեղ ներկայացվել են 19-րդ դարի հայկական կարպետի դասական նմուշներ՝ Հայաստանի տարբեր պատմա-ազգագրական շրջաններից (ՀՊԹ, արխիվ, ֆ. 1, ց. 2, գ. 553, էջ 2–3):

2014 թվականի մայիսի 17-ին Թանգարանային գիշեր ամենամյա համաեվրոպական մշակութային միջոցառման շրջանակներում և թանգարանների միջազգային օրվա առթիվ կազմակերպվել է ցուցահանդես՝ «Վանի ասեղնագործությունը» խորագրով: Ցուցահանդեսում ներկայացվել են 18–19-րդ դարերի Վան-Վասպուրականի ասեղնագործության, դեկորատիվ և կիրառական արվեստի բնօրինակ նմուշներ, 20-րդ դարասկզբի Վանը պատկերող լուսանկարներ: Ցուցահանդեսի բնաբան էր ընտրված նկարիչ Արշիլ Գորկու ստեղծագործություններից մեկի խորագիրը՝ **Ինչպես մորս ասեղնագործ գոգնոցը բացվում է իմ կյանքի մեջ,** որը, նկարչի խոստովանությամբ իր մանկության և ծննդավայրի մշտարթուն հիշողությունն էր (ՀՊԹ, Արխիվ, ֆ. 1, ց. 2, գ. 610, 1–2):

Նույն թվականի հունիսի 20-ին բացված «Նորամուտ գորգ» խորագրով ցուցահանդեսը հայկական գորգի նշանավոր մասնագետ Ֆոլքմար Գանցհորնի կողմից ՀՊԹ-ին նվիրաբերած 17-րդ դարի գորգարվեստի մի եզակի նմուշի շնորհանդեսն էր: Ներկայացված «Սումախ» տիպի կարպետների վաղագույն մի օրինակ, որի հայրենիքը Հայաստանն է (ՀՊԹ, Արխիվ, ֆ. 1, ց. 2, գ. 610, 2):

2021 թվականին թանգարանում տեղի ունեցան վերադասավորումներ: Մասնավորապես՝ վերակազմավորվեց ազգագրության բաժինը, որի արդյունքում բաժինը հնարավորություն ստացավ կենտրոնանալու զուտ գիտահետազոտական աշխատանքի վրա: Բաժնի ողնաշարն են հանդիսանում դեռևս 1972 և 1990 թվականից թանգարանում աշխատող պատմական գիտությունների թեկնածուներ Ա. Իսրայելյանը և Լ. Ավանեսյանը: Նույն 2021 թվականին նրանց միացան երիտասարդ գիտաշխատողներ Ա. Ասատրյանը, Հ. Պետրոսյանը և Ն. Կարապետյանը: Այսպիսով լուծվեց երկու կարևոր խնդիր. ա) բաժինն առավել մեծ ծավալով սկսեց զբաղվել թանգարանի ազգագրական հավաքածուների ուսումնասիրությամբ, բ) ապահովվեց սահուն, անցնցում սերանդափոխության հարցը:

Կարևորագույն իրադարձություն էր շուրջ 40 տարվա դադարից հետո «Աշխատություններ Հայաստանի պատմության թանգարանի» գիտական հանդեսի վերականգնումը, որը նշանավորվեց նույն 2021 թվականին կազմակերպված Հանրապետության 30-ամյակին նվիրված գիտաժողովով: Բաժնի բոլոր հինգ աշխատակիցները հանդես եկան թանգարանի հավաքածուները լուսաբանող զեկուցումներով, որոնք այնուհետև որպես հոդվածներ տպագրվեցին աշխատությունների 8-րդ համարում: 2022 թվականից Աշխատությունները սկսեցին լույս տեսնել տարեկան երկու համարով: Բաժնի աշխատակիցներն այնուհետև անմասն չմնացին հանդեսին իրենց գիտական ավանդը բերելուց՝ այսպիսով շարունակելով արդեն ձևավորված ավանդույթը՝ թանգարանի ազգագրական հավաքածուների շարունակական ուսումնասիրությունն ու հանրահռչակումը:

Բաժինն անմասն չմնաց նաև ցուցահանդեսային գործունեությունից: 2021 թվականից սկիզբ դրվեց «Դրվագներ ինքնության» ժամանակավոր-թեմատիկ ցուցահանդեսների շարքին: 2021 թվականին կազմակերպվեց «Դրվագներ ինքնության. տարազ», 2022-ին՝ «Դրվագներ ինքնության. զարդ», 2023-ին՝ «Դրվագներ ինքնության. գորգ» ցուցահանդեսները: 2022 թվականին կազմակերպվեց «Զենք. Պայքար և մշակույթ» ժամանակավոր ցուցահանդեսը (թանգարանի հնագիտության բաժնի գործուն մասնակցությամբ): Ինչպես ցույց է տալիս ցուցադրության խորագիրը, ցուցահանդեսն անդրադառնում էր զենքին ոչ միայն ռազմական-կիրառական, այլև մշակութային տեսանկյունից: Ցուցահանդեսն անդրադարձ էր կատարել նաև հայկական զինագործությանը:

## Վերջաբանի փոխարեն

Այսպիսով՝ ի մի բերելով վերը ասվածը, կարող ենք ամրագրել, որ Հայաստանի պատմության թանգարանի ազգագրության բաժինը, կազմավորման պահից սկսած, աչքի է ընկել գիտա-հավաքչական և գիտա-հետազոտական աշխատանքների կազմակերպվածությամբ, համակարգվածությամբ, գործունեության տար-

բեր փուլերում առաջնահերթությունների հստակ արձանագրմամբ և աշխատանքային բարձր արդյունավետությամբ: Բաժնի գործունեության ընթացքում զուգահեռաբար կազմակերպվել և իրականացվել են և՛ թանգարանային հավաքածուների համալրումը, և՛ բանահավաքչական աշխատանքը, և՛ ցուցահանդեսային աշխատանքը, և՛ հաշվառման ու պահպանման աշխատանքները:

Մյուս կողմից կան թեմաներ և հավաքածուներ, որոնք դեռևս կարոտ են համակողմանի ու խորքային ուսումնասիրության և հանրահռչակման: Օրինակ, չնայած Հայաստանում քրիստոնեության ընդունման 1700-ամյակին ընդառաջ կազմակերպված ցուցահանդեսին, համակողմանի ուսումնասիրված չէ թանգարանի եկեղեցական սպասքի և հանդերձի հավաքածուն: Սույն հետազոտության ընթացքում չհանդիպեցինք նաև փայտի գեղարվեստական մշակման հետ կապված հիմնարար ուսումնասիրությունների:

Բազմիցս կազմակերպվել են ցուցահանդեսներ գեղարվեստական գործվածքի տարբեր խմբերի վերաբերյալ (գորգ, կարպետ, անկողնապարկ, աղաքսակ, ասեղնագործություն, ժանյակ, տարազ)՝ թանգարանի ազգագրական հավաքածուները լուսաբանելով և հանրության սեփականություն դարձնելով տարբեր տեսանկյուններից: Սրա հետ մեկտեղ անդրադարձ չի եղել, օրինակ, հայկական տարազի անբաժան մաս կազմող ներքնազգեստի նմուշներին, որոնք հանդիսանում են տվյալ ժամանակաշրջանի հասարակության գեղագիտական ճաշակի ցուցիչ, կամ, ասենք, բաղնիքի թեմային (բաղնիք գնալու մշակույթին), ինչը նույնպես հայ ավանդական կենցաղի անբաժան մաս էր կազմում և դարձյալ կարոտ է լուսաբանման ու հանրահռչակման:

Այս ամենով հանդերձ՝ Հայաստանի պատմության թանգարանի ազգագրության բաժինն իր ավելի քան մեկդարյա գործունեության ընթացքում իր զգալի ավանդն է ունեցել և շարունակում է ունենալ հայ ազգագրության ուսումնասիրման գործում: Բաժնի աշխատակիցները բոլոր ժամանակներում և այժմ էլ մեծ պատասխանատվությամբ են մոտենում աշխատանքային ավանդույթներին, որոնք ձևավորվել են դեռևս Ե. Լալայանի, Ս. Լիսիցյանի և Վ. Բդոյանի օրոք:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ՀՊԹ արխիվ, ֆոնդ 1, ցուցակ 1, գործ 416. Զանգեզուրի, Իջևանի, Ախալցխա-Ախալքալաքի, Արցախի, Արարատյան հովտի, Լոռու շրջաններ գնացած արշավախմբերի մասին: Ստ. Ղեկավարությամբ արշավախմբերի ցանկը, 1931–1966 թթ.:

ՀՊԹ արխիվ, ֆոնդ 1, ցուցակ 1, գործ 435. Ազգագրական բաժնի աշխատանքների պլան և հաշվետվություն, 1950 թ.:

ՀՊԹ արխիվ, ֆոնդ 1, ցուցակ 1, գործ 443. Ազգագրական բաժնի աշխատանքների պլան և հաշվետվություն, 1953 թ.:

ՀՊԹ արխիվ, ֆոնդ 1, ցուցակ 1, գործ 457. ՀՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Պետական պատմական թանգարան, Ազգագրական բաժին, 1960 թ.:

ՀՊԹ արխիվ, ֆոնդ 1, ցուցակ 1, գործ 463. ՀՊՊ թանգարան, Ազգագրական բաժնի տարեկան հաշվետվությունը, 1961 թ.:

ՀՊԹ արխիվ, ֆոնդ 1, ցուցակ 1, գործ 469. ՀՊՊ թանգարան, Ազգագրական բաժնի աշխատակիցների տարեկան հաշվետվությունները, 1962 թ.:

ՀՊԹ արխիվ, ֆոնդ 1, ցուցակ 1, գործ 473. ՀՊՊ թանգարան, Ստ. Լիսիցյանի ազգագրական կաբինետի գործունեության հաշվետվություն, 1963 թ.:

ՀՊԹ արխիվ, ֆոնդ 1, ցուցակ 1, գործ 481. ՀՊՊ թանգարան, Ազգագրական բաժնի տարեկան հաշվետվությունը, 1964 թ.:

ՀՊԹ արխիվ, ֆոնդ 1, ցուցակ 2, գործ 129, ՀՊՊ թանգարանի տարեկան հաշվետվությունը, 1969 թ.:

ՀՊԹ արխիվ, ֆոնդ 1, ցուցակ 2, գործ 135. ՀՊՊ թանգարանի տարեկան հաշվետվությունը հիմնական գործունեության վերաբերյալ, 1966 թ.:

ՀՊԹ արխիվ, ֆոնդ 1, ցուցակ 2, գործ 142. ՀՊՊ թանգարանի տարեկան հաշվետվությունը և վիճ. հաշվետվություն աշխատակիցների թվի և ըստ պաշտոնների մասին, 1968 թ.:

ՀՊԹ արխիվ, ֆոնդ 1, ցուցակ 2, գործ 144. ՀՊՊ թանգարանի աշխատանքային գործունեության տարեկան հաշվետվությունը, 1969թ.:

ՀՊԹ արխիվ, ֆոնդ 1, ցուցակ 2, գործ 147. ՀՊՊ թանգարանի տարեկան հաշվետվությունները, սկսված է՝ 1975 թ., ավարտված է՝ 1979 թ.:

ՀՊԹ արխիվ, ֆոնդ 1, ցուցակ 2, գործ 170. ՀՊՊ թանգարանի բաժինների տարեկան հաշվետվություն, սկսված է՝ 1990 թ., ավարտված է՝ 1991 թ.:

ՀՊԹ արխիվ, ֆոնդ 1, ցուցակ 2, գործ 173. ՀՊՊ թանգարանի բաժինների տարեկան հաշվետվություն, սկսված է՝ 1995 թ., ավարտված է՝ 1996 թ.:

ՀՊԹ արխիվ, ֆոնդ 1, ցուցակ 2, գործ 370. ՀՊՊ թանգարանի տարեկան հաշվետվություն, 1997–1998 թթ.:

ՀՊԹ արխիվ, ֆոնդ 1, ցուցակ 2, գործ 371. ՀՊՊ թանգարանի տարեկան հաշվետվություն, 1999–2000 թթ.:

ՀՊԹ արխիվ, ֆոնդ 1, ցուցակ 2, գործ 372. ՀՊՊ թանգարանի աշխատանքային գոնրծունեության տարեկան հաշվետվություն, 2001–2002 թթ.:

ՀՊԹ արխիվ, ֆոնդ 1, ցուցակ 2, գործ 456, Հաշվետվություններ /տարեկան/ Հայաստանի պատմության թանգարանի կատարած աշխատանքների, սկսված է 2004 թ. ավարտված է 2008 թ.:

ՀՊԹ արխիվ, ֆոնդ 1, ցուցակ 2, գործ 553, Հաշվետվություն Հայաստանի պատմության թանգարանի կատարած աշխատանքների, 2012–2013 թթ.:

ՀՊԹ արխիվ, ֆոնդ 1, ցուցակ 2, գործ 610, Հայաստանի պատմության թանգարանի կատարած աշխատանքների տարեկան հաշվետվությունները, սկսված է 2014 թ., ավարտված է 2015 թ.:

ԱՎԱՆԵՍՅԱՆ 2022 – Ավանեսյան Լ., Նազիկ Ավագյանի հիշատակին, *Աշխատություններ Հայաստանի պատմության թանգարանի*, Երևան, 2022, № 1(9), 149–152:

ԱՎԱՆԵՍՅԱՆ 2023 – Ավանեսյան Լ., Եվգենյա Գյուզալյան. ընդհատված կենսագրություն, *Աշխատություններ Հայաստանի պատմության թանգարանի*, Երևան, 2023, № 1(11), 260–261:

ԵՐԵՄՅԱՆ ԵՎ ՈՒՐԻՇՆԵՐ 1987 – Երեմյան Ս., Վարդումյան Դ., Վարդանյան Լ., *Ստեփան Դանիելի Լիսիցյան, Նյութեր Հայկական ՍՍՀ գիտնականների կենսամատենագիտության*, Երևան, 1987, № 41:

ՄԵԼԻՔ-ՓԱՇԱՅԱՆ, ՆԱԶԻՆՅԱՆ 1983 – Մելիք-Փաշայան Կ., Նազինյան Ա., Երվանդ Լլայանի կյանքն ու գիտական գործունեությունը, *Ե. Լալայան, երկեր հինգ հատորով*, Երևան, 1983, հատոր I, 7–32:

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ 2010 – Նահապետյան Ռ., Հայ ազգագրության և բանագիտության մեծ երախտավորը (Վարդ Բդոյանի ծննդյան 100-ամյակի առթիվ), *Էջմիածին*, 2010, Ժ, 58–69:

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ 2017 – Նահապետյան Ռ., Հայ ազգագրական գիտությունը խորհրդային շրջանում (1920–1940-ական թթ.), *«Ակունք» գիտական հոդվածների ժողովածու*, Երևան, 2017, թիվ 2(16), էջ 5–28:

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ 2019 – Նահապետյան Ռ., *Ազգաբանական ուսումնասիրություններ*, Երևան 2019, գիրք 2:

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ 2023 – Նահապետյան Ռ., *Հայ ազգագրության պատմություն (18-րդ դարի երկրորդ կեսից մինչև մեր օրերը)*, Երևան 2023:

ՊԵՏՈՅԱՆ 2014 – Պետոյան Վ., *Սասունի ազգագրությունը*, Երևան 2014:

ՊԵՏՈՅԱՆ 2016 – Պետոյան Վ., *Սասուն*, Երևան 2016:

## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՀՊԹ – Հայաստանի պատմության թանգարան

ՀՍԽՀ – Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն

ՀՍՍՀ – Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետություն

ՊՈԱԿ – Պետական ոչ առևտրային կազմակերպություն

ՍՍՀՄ – Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միություն

ԳԱ – Գիտությունների ակադեմիա

ԽՍՀՄ – Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն

ՀՍՍՌ – Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկա

ՀՊՊԹ – Հայաստանի պատմության պետական թանգարան

Artak Asatryan
*History Museum of Armenia*
sardarapatasatryan@gmail.com

## GLIMPSES OF HISTORY OF THE ETHNOGRAPHY DEPARTMENT OF THE HISTORY MUSEUM OF ARMENIA

**Keywords:** History Museum of Armenia, archive, ethnography, scientific expeditions, collections, exhibition, scientific research work

This work briefly presents the activities of some employees of the Ethnography Department of the History Museum of Armenia. The Ethnography Department of the History Museum of Armenia has more than 100 years of history, and the great figures of Armenian ethnography, E. Lalayan, S. Lisitsyan, V. Bdoyan, N. Avagyan and others worked in there. This work is devoted to individual episodes of their lives and activities.

Артак Асатрян
*Музей Истории Армении*
sardarapatasatryan@gmail.com

## ИЗ ИСТОРИИ ОТДЕЛА ЭТНОГРАФИИ МУЗЕЯ ИСТОРИИ АРМЕНИИ

**Ключевые слова:** Музей истории Армении, архив, этнография, научные экспедиции, коллекции, экспозиция, научно-исследовательская работа

В работе кратко представлена деятельность некоторых сотрудников отдела этнографии Музея истории Армении. В отделе этнографии Музея истории Армении, имеющего более чем 100-летнюю историю, работали великие деятели армянской этнографии Е. Лалаян, С. Лисицян, В. Бдоян, Н. Авагян и другие, отдельным эпизодам жизни и деятельности которых посвящена данная работа.